



Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

## ՅԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՃԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ *Լոռու մարզ, ք. Սպիտակ, Ա. Մյասնիկյանի անվան N9  
1 հիմնական դպրոց*

Թեմա՝ Գործնական աշխատանքի կազմակերպումը կենսաբանության  
առարկայի շրջանակում

Վերապատրաստող, մենթոր՝ Հայարիի Խաչատրյան  
Ուսուցիչ՝ Հասմիկ Ղազարյան

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.Ներածություն. . . . . 3

2.Գործնական աշխատանքներ կազմակերպելիս ուսուցչի դերը. . . . . 5

3.Գործնական  
աշխատանքներ. . . . . 7

4.Գործնական աշխատանքների կազմակերպումը. . . . . 9

5.Գործնական աշխատանքի տեսակների կիրառումը կենսաբանության  
դասապրոցեսում . 11

6.Ինքնուրույն գործնական աշխատանքների դասակարգումը. . . . . 13

7. Արժեքային համակարգի  
ձևավորումը. . . . . 14

8. Նախագծային  
մեթոդ. . . . . 16

9.Եզրակացություն. . . . . 17

10.Օգտագործված գրականության ցանկը. . . . . 18

1. Ներածություն

**Ուսումը կանոններն է սովորեցնում,**

**փորձը` բացառությունները:**

**ԲԵՆՋԱՄԻՆ ԴԻՉՐԱԵԼԻ**

Աշակերտի ձեռք բերած գիտելիքները հիմնավոր և օգտակար են այնքանով, որքանով նա կարող է դրանք կիրառել: Այդ գիտելիքների կիրառությունների կարողությունը զարգացնելու նպատակով նախատեսվում են գործնական աշխատանքներ: Ելնելով ուսումնական առարկայի առանձնահատկություններից` գործնական աշխատանքները կարող են լինել տարբեր` տեղանքում կողմնորոշվելու, գործիքներով աշխատելու կարողություն, լաբորատոր պայմաններում փորձ, տեսական կիրառություններ կամ մոդելավորում, մակետների կազմում և նոր տեխնոլոգիա-ներ-րի յուրացում և այլն: Կիրառություններից առանձնահատուկ արժեք ունի միջառարկայական կապերի խթանումը: Այս աշխատանքները կարող են արվել և՛ դասաժամի ընթացքում, և՛ դասից դուրս:

Սովորողներին պետք է հասկանալի դարձնել այն, որ հետազոտությունները կատարվում են ոչ միայն հանուն գիտության, այլև հանուն պրակտիկ գործունեության զարգացման: Գործնական աշխատանքները կարող են իրականացվել ինչպես դասերի ժամանակ, այնպես էլ դասերից դուրս:

Սովորողների կողմից կատարվող այն աշխատանքները, որոնք վերաբերում են նրանց ձեռք բերված գիտելիքների, կարողությունների և հմտությունների գործնական կիրառություններին անվանում են գործնական աշխատանք: Գործնական աշխատանքների հիմնական նպատակներն ու խնդիրներն են.

- ձևավորել և զարգացնել սոցիալական հմտություններ
- մատուցել կիրառման համար անհրաժեշտ տեսական և գործնական նյութ
- նպաստել անհատի ինքնադրսևորմանը, կենսագործունեությանը և կրթության շարունակականության ապահովումը ուղղված հմտությունների զարգացմանը

Գիտելիքների որոնումը, դրանց իմաստավորումը, ամրապնդումը, կարողությունների և հմտությունների ձևավորում և զարգացումը, գիտելիքների ընդանրացումը և

համակարգումը պետք է իրականացվեն գործնական աշխատանքների ընթացքում: Գործնական աշխատանքը որպես մանկավարժական երևույթ, մի կողմից՝ այդ առաջադրանքի կատարման ընթացքում համապատասխան գործունեության՝ հիշողության, մտածողության ստեղծագործական երևակայության դրսևորման ձև, որը սովորողին տալիս է միանգամայն նոր գիտելիք:

Գործնական աշխատանքի կատարման ժամանակ սովորողը հայտնվում է իր համար ոչ սովորական իրավիճակում, որտեղ անհրաժեշտ է ստեղծագործական մոտեցում, որպեսզի լուծի իր առջև դրված խնդիրը: Գործնական աշխատանքը ենթադրում է ոչ ստանդարտ մտածողություն, ստեղծագործական մտածողություն, նախաձեռնություն ցուցաբերելու կարողություն և հնարամտություն, ինքնուրույն որոշում կայացնելու, անհրաժեշտ տեղեկատվություն որոնելու պատրաստակամություն:

Գործնական աշխատանքի բոլոր տեսակները պետք է ապահովեն ինքնուրույն – ճանաչողական գործողություն ծավալելու կարողությունը:

Արդիականությունը - Գործնական աշխատանքը ընթացիկ գնահատման արդյունավետ տեսակներից է՝ Զանրակրթության պետական նոր չափորոշչով սահմանված 8 առանցքային կարողունակությունների զարգացումն ապահովելու նպատակով:

Աշխատանքի նպատակն է.

Ներկայացնել և հիմնավորել գործնական աշխատանքների կարևորությունը կենսաբանության դասավանդման գործընթացում և կիրառման նպատակահարմարությունը կենսաբանության ուսուցման ժամանակ:

Խթանել սովորողների ուսումնական հետաքրքրությունները նպաստելով ներգրավածությանը:

Ուսուցման բարելավումն է, ինչը հնարավորություն է սովորողի՝ սեփական կրթության մեջ ակտիվ դերակատարում ունենալու պարագայում: Սովորողը նպատակային սովորում է սովորել, փնտրել և գտնել:

Չետագոտության խնդիրն է ներկայացնելով կենսաբանության ուսուցման գործընթացում գործնական աշխատանքների իրականացման կարևոր նշանակությունը. կոնկրետ օրինակների միջոցով ցույց տալ դրա

արդյունավետությունը, պլանավորել և իրականացնել գործնական աշխատանքներ կենսաբանության ուսուցման ժամանակ:

Կիրառել դասավանդման տարբեր մոդելներ:

Գործնական աշխատանքները հնարավորություն են տալիս.

1. Խթանել սովորողների մոտ բարձր կարգի մտածողություն:
2. Տեսական գիտելիքների իմացությունից անցում կիրառականի
3. Բարձրացնել ուսումնառության որակը:

Գործնական աշխատանքների կատարման ընթացքում անհրաժեշտ է պահպանել հետևյալ կանոնները.

- ❖ ցանկացած գործնական աշխատանք պետք է ունենա նպատակ
- ❖ գործնական աշխատանքը պետք է համապատասխանի սովորողների կարողություններին
- ❖ գործնական աշխատանքի ընթացքում երեխաները պետք է կարողանան կիրառել իրենց մինչև այդ յուրացրած գիտելիքներն ու կարողությունները
- ❖ յուրաքանչյուր սովորող պետք է իմանա կատարման ընթացքը և յուրացնի ինքնուրույն գործելու հնարքները
- ❖ գործնական աշխատանքի ընթացքում ստացված արդյունքները կամ եզրահանգումները պետք է կիրառվեն ուսումնական գործընթացում
- ❖ գործնական աշխատանքի բովանդակությունն ու քայլաշարը պետք է հետաքրքրություն առաջացնի

## **2.ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼԻՍ ՈՒՍՈՒՑՉԻ ԴԵՐԸ**

Յուրաքանչյուր աշակերտ պետք է հեռու լինի սահմանափակ, կաղապարված մտածողությունից, նա պետք է կարողանա թափանցել ցանկացած խնդրի, պրոբլեմի խորքերը, վերլուծել տվյալ երևույթը, կարողանա կատարել համադրում, համեմատում և այլն: Երեխաները պետք է կարողանան ինքնուրույն լուծել ցանկացած ուսումնական խնդիր, վերլուծել և դուրս գալ պրոբլեմային իրադրությունից:

Գործնական աշխատանքները կազմակերպելիս չպետք է անտեսել նաև աշակերտների ունեցած անձնական փորձը: Գործնական աշխատանքներն արդյունավետ իրականացնելու համար ուսուցիչը պետք է.

- ապահովի աշակերտներին գործնական աշխատանքն իրականացնելու համար անհրաժեշտ միջոցներով, ուսումնասօժանդակ նյութեր, մոդելներ, գործիքներ, սարքեր
- նախապատրաստական աշխատանք տանի աշակերտների հետ, որպեսզի նրանք ոչ միայն իմանան տեսական այն նյութը , որի հիման վրա պետք է կատարեն գործնական աշխատանքը, այլև ծանոթ լինեն այն իրականացնելու հնարներն ու միջոցներին
- վերահսկի աշխատանքի կատարման ընթացքը, անհրաժեշտության դեպքում ինքը ևս ներգրավվի այդ աշխատանքում
- վերլուծի և գնահատի կատարած աշխատանքը

Այս պարագայում ուսուցիչը պատրաստի գիտելիք հաղորդողից վերածվում է հետազոտական աշխատանքի կազմակերպիչ, օգնական և ուղղորդող: Այդ ուսուցչին բնորոշ են.

1. անկողմնակալ մոտեցումը
2. համագործակցային և զարգացնող ուսուցման տեխնոլոգիաների կիրառումը
3. սովորողի վերլուծական գործունեության ակտիվացման համար որպես հիմք խնդրահարույց, հետազոտական, ստեղծագործական մոտեցումների ընդունումը
4. ժողովրդավարական, մարդասիրական հարաբերությունների վրա հիմնված տեխնոլոգիաների կիրառումը

## 5. Ինֆորմացիոն համակարգերի և միջոցների օգտագործումը

Գործնական աշխատանքի ընթացքում ուսուցիչը պետք է ստեղծի շարժառիթ աշխատանքը հետաքրքրությամբ անելու համար, օգնել աշակերտներին - հաղթահարելու տեխնիկական դժվարությունները, վերահսկել- կատարվող աշխատանքների ուղղությունը, դրական արձագանքել - խրախուսել ինքնուրույնությունը, նախաձեռնությունը, նորարարությունը, համագործակցությունը:

### 3. ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**Կրթությունը գիտելիքների քանակը չէ, այլ լիակատար ըմբռնումն ու հմուտ կիրառումն այն ամենի, ինչ գիտես: ԱՂՈՒՑ ԴԻՍԵՐՎԵԳ**

Կրթական բարեփոխումները նոր մոտեցումներ ու պահանջներ են մտցնում ինչպես ամբողջ կրթության բովանդակության, այնպես էլ նրա իրականացման առանձին ուղղություններում: Փոխվում է մեթոդական պահանջը, փոխվում է արդյունքների ստուգման ու վերահսկման բուն գործընթացը:

Կենսաբանության ուսուցման մեջ առանձնակի նշանակություն ունի ինքնուրույն-գործնական աշխատանքների կատարման ընթացքում սովորողների ձեռքբերումների գնահատումը: Այն լուծում է մի շարք մեթոդական խնդիրներ:

Գործնական աշխատանքի ընթացքում աշակերտները պետք է կարողանան.

- որոնել, հավաքել և մշակել անհրաժեշտ տեղեկատվություն,
- աշխատել ինքնուրույն և ընկերների հետ
- կոնկրետ հիմնախնդիրը լուծելու համար կիրառել տարբեր ոլորտներից ձեռք բերած գիտելիքները
- աշխատանքի արդյունքում իրական և շոշափելի արդյունք ստանալ

Գործնական աշխատանքները հնարավորություն են ընձեռնում սովորողների գիտելիքները մեխանիկական- վերարտադրողական աստիճանից փոխարկել արդյունավետ- կատարողական աստիճանի, այն դարձնել կայուն, մշակել որոշակի հմտություններ, ձևավորել դրական որակներ՝ կամք, հետևողականություն, հետազոտական հետաքրքրասիրություն: Սովորողի ինքնուրույնությունը վկայում է մտածական գործողություններին տիրապետելու՝ վերլուծելու, համադրելու- հակադրելու, եզրակացություններ կատարելու կարողությունների մասին: [2,12-13]

Ինքնուրույնությունն ակտիվ ճանաչողական գործընթաց է, որն իրականացնում է սովորողը, ուսուցչի անմիջական վերահսկողությամբ և մասնակցությամբ:



Գործնական աշխատանքների ժամանակ պետք է սովորողի ինքնուրույնությունը դրսևորվի ոչ թե արտաքին ակտիվության, նրա մասնակցության այլ ներքին, մտածողության տարրեր պարունակող ակտիվության ձևով: Դրան հասնելու համար ուսուցչից մեծ համբերություն և հմտություն է պահանջվում:

Ժամանակակից ուսուցչի հմտության չափանիշներից է.

բացատրած ուսումնական նյութի որակը

ինքնուրույն աշխատանքի կազմակերպումը

իմացական հետաքրքրությունների խթանումը

Փորձառու ուսուցիչը պեք է նախապես ուսումնական պլանի մեջ բավարար տեղ և ժամանակ հատկացնի սովորողների ինքնուրույն աշխատանքների անցկացման համար: Նա միաժամանակ պլանավորում է նաև այդ աշխատանքների վերահսկման ձևերն ու գնահատման չափանիշները: [2,10]

#### 4. ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Գիտելիքի գործնական կիրառումը իրականացվում է երկու ձևով՝ դասի ընթացքում և դասից դուրս: Անցկացման այս ձևերն ունեն որոշակի առանձնահատկություններ, իսկ ընդհանրությունը հետևյալն է.

- աշխատանքի կատարման համար ուսուցիչը սովորողին տրամադրում է որոշակի ժամանակ,
- աշխատանքը կատարվում է առանց ուսուցչի մասնակցության, սակայն նրա անմիջական ուղղորդմամբ,
- ուսուցիչը որոշում է աշխատանքի ծավալը, բովանդակությունը, կատարման հաջորդականությունը,
- ուսուցչի օգնությունը չի բացառվում, սակայն շատ կարևոր է սովորողի ինքնուրույնության խրախուսումը,
- ինքնուրույն աշխատանքի արդյունքները կարող են գրանցվել սխեմաների, գծապատկերների, պաստառների, հետազոտական նախագծերի ռեֆարատների և այլ բնույթի ամփոփիչ նյութերի ձևով:

Ուսուցիչների զգալի մասին մտահոգում է հարցը՝ ե՞րբ և ինչպե՞ս կազմակերպել սովորողների ինքնուրույն գործնական աշխատանքները:

Ըստ դիդակտիկ նպատակների՝ սովորողների գործնական աշխատանքները կարելի է բաժանել հինգ խմբի՝

1. դասի սկզբում կատարվող աշխատանքներ, որոնց նպատակն է ստուգել տնային հանձնարարությունները կամ կենտրոնացնել սովորողների ուշադրությունը նոր ուսուցանվող նյութի ուղղությամբ
2. նախապես կատարվող ինքնուրույն-գործնական աշխատանքներ, որոնց նպատակը մատչելի գիտելիքների յուրացումն է՝ առանձն նոր նյութի բացատրության,
3. ամրապնդող և ընդհանրացնող աշխատանքներ, որոնց նպատակն է կրկնել, ամրապնդել և ընդհանրացնել սովորողների գիտելիքները ուսումնական նյութի յուրացումից հետո,
4. գիտելիքների ու հմտությունների ստուգման

նպատակով կազմակերպվող աշխատանքներ, որոնք անց  
են կացվում դասի ընթացքում կամ վերջում,

5. տնային առաջադրանքներ, որոնք կատարվում են դասերից դուրս:

Այսպիսի բաժանումը միանշանակ չէ, սակայն ունի լուրջ հիմնավորում և լայն ճանաչում  
կենսաբանությունն առարկայի սովորողների իմացական ակտիվության ձևավորման  
խնդրում:

Գործնական աշխատանքների նշված տարատեսակների արդյունքները կարող են  
օգտագործել ինչպես ուսուցողական, այնպես էլ ամփոփիչ գնահատման համար: [2,11]

## **5. ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՃԽԱՏԱՆՔԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԴՐՈՑԵՍՈՒՄ**

Դիտումը գիտական հետազոտության կարևոր մեթոդ է: Նրա թերությունն այն է, որ դիտորդը չի կարող ազդել հետազոտվող գործընթացի վրա, չի կարող կարգավորել ու վերահսկել այն:

Դիտումը գիտության մեջ հասկացվում է որպես կենդանի բնության օբյեկտների կամ երևույթների նպատակաուղղված, կազմակերպված հետազոտում բնական պայմաններում:

Դիտման մեթոդի արդյունավետությունը մեծապես կախված է նրանից, թե որքան հստակ է առաջադրված խնդիրը ուսուցիչի կողմից և պարզաբանված դիտարկման նպատակը: Դրա համար անհրաժեշտ նախապես պլանավորել աշխատանքի ընթացքը՝ փուլերը և հերթական քայլերը: Այդ մասին սովորողին պետք է իրազեկ դարձնել մինչև աշխատանքի սկիզբը և խելամիտ ձևով ուղղորդել նրա հետագա գործողությունները:

Դիտումներն առավել արդյունավետ են, եթե պահպանված է սովորողի ինքնուրույնության առավելագույն չափը, և նվազագույնի է հասցված ուսուցչի միջամտությունը:

### ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ԴԻՏՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՍՈՎՈՐՈՂԸ ՊԵՏՔ Ե ԿԱՐՈՂԱՆԱ

- նկարագրել երևույթի ընթացքը,
- առանձնացնել էական փուլերը,
- մանրակրկիտ գրառել դիտումների արդյունքները,
- վերլուծել պատճառ-հետևանքային կապերը,
- կատարել մտահանգումներ և եզրակացություններ

Դիտումների արդյունքների վերաբերյալ սովորողը պետք է ներկայացնի հաշվետվություն, որին կարող է կցել նաև լրացուցիչ նյութեր՝ պաստառներ, գծապատկերներ, լուսանկարներ:

Եթե ուսուցիչը նախատեսում է, որ դիտումների արդյունքների մասին սովորողի հաշվետվությունը պետք է գնահատվի, ապա պետք է նախապես նրան տրամադրի նաև

աշխատանքի գնահատման սյունակաշար:[2,19]

Կենսաբանության դասընթացի դիտումների օրինակ է 7-րդ դաս սերմերի ծլման և աճի ուսումնասիրությունը կախված երաժշտութից, 9-րդ դասարան՝ աղբահանության խնդիրները համայնքում, 11-րդ դասարան՝ մոդիֆիկացիոն փոփոխականություն և այլն:

### ՓՈՐՁԵՐ

Փորձը ակտիվացնում է սովորողի մտածողությունը, զարգացնում ինքնուրույնություն , հետևողականություն, խթանում է իմացական հետաքրքրությունը:

Դասի ժամանակ փորձը կարող է կատարել

-ուսուցիչը

-մեկ- երկու աշակերտ

- աշակերտների խմբեր

-յուրաքանչյուր աշակերտը՝ անհատական

Կենսաբանության ուսուցումն առանց փորձերի հնարավոր չէ: Փորձ կատարելուց առաջ անհրաժեշտ է սովորողների մեջ առաջացնել հարցադրման և հարցի պատասխանները փորձնական ճանապարհով գտնելու դրդապատճառ:

Այսպիսի կարողության ձևավորումը պահանջում է երկարատև և հետևողական աշխատանք:

Փորձի անցկացման համար սովորողին պետք է տրվի գրավոր հրահանգ:

Թերթիկը պետք է պարունակի ցուցումներ նախապատրաստական աշխատանքների, անհրաժեշտ նյութերի ու սարքավորումների, կատարվող փորձի հաջորդական քայլերի մասին:

7-րդ դասարան՝ բերանի խոռոչի բակտերիաների ուսումնասիրություն, նախակենդանիներ, խմորասնկերի բողբոջուն,9-րդ դասարան՝ ԴԼԹ-ի անջատումը բանախնայ, 11-րդ դասարան՝ սպիտակուցի ֆերմենտային ակտիվության դիտարկում, բջջի ցիտոպլազմայի հատկությունների ուսումնասիրությունը և այլն:

### ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՈՒՄ

Կենսաբանության դասավանդման կարևորագույն բաղադրիչներից է խնդիրների լուծումը , առանց որի հնարավոր չէ ապահովել դասընթացի արդյունավետ յուրացումը: Խնդիրների լուծումը զարգացնում է սովորողների ձեռք բերած տեսական գիտելիքները գործնականում կիրառելու կարողություններն ու հմտությունները: Ավելի լայն առումով խնդիրը նպատակ է, որին պետք է հասնել, հարց է, որին պետք է պատասխանել:[1,12-13]

Կենսաբանական խնդիրների հանդիպում են՝ 8-րդ դասարանի սիրտ -անոթային հմակարգ, շնչառական համակարգ, արտազատական համակարգ, մարսողական համակարգ, 9-րդ և 10-րդ դասարաններ՝ նուկլեինաթթուներ, ամինաթթուներ, սպիտակուցի կենսասինթեզ, նյութափոխանակություն, 11-րդ դասարան՝ գենետիկա, մոդիֆիկացիոն փոփոխականություն, պոպուլյացիաների գենետիկ բաժիններից:

## **5.ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ**

Սովորողների ինքնուրույն-գործնական աշխատանքները կարելի է դասակարգել ըստ նրանց կողմից մտածական ակտիվության դրսևորման աստիճանի:

Առաջին խումբ այն աշխատանքներն են, որոնց կատարման համար սովորողները օտագործում են իրենց հայտնի ձևերը, մեխանիկորեն նմանակում են ուսուցչի համանման գործողությունը, օգտվում ուսուցչի ցուցադրած նմուշ օրինակից: Այդպիսի աշխատանքների թվին են պատկանում զանազան գծապատկերների, փորձի վերարտադրումը, պարզ խնդիրների լուծումը: Այս կարգի աշխատանքները օգտակար են որոշակի հմտությունների ձևավորման համար:

Երկրորդ խումբը պահանջում են ստեղծագործական մոտեցում: Այս պարագայում սովորողները դրսևորում են մտածական ավելի մեծ ակտիվություն, քանի որ անհրաժեշտ է ծանոթ գիտելիքներն ու հմտությունները կիրառել նոր, անծանոթ իրավիճակներում: Այդպիսի աշխատանքներից են զանազան փորձերի, դիտումների կատարումը, այնպիսի խնդիրների լուծումը, որոնք պարունակում են նոր պայմաններ:

Երրորդ խումբը պարունակում են խնդրահարույց հարցադրումներ, որոնողական, հետազոտական աշխատանքներ: Դրա համար սովորողը պետք է օժտված լինի բարձր կարգի, մտածողական ակտիվությամբ և ինքնուրույնությամբ: Այդպիսի աշխատանքները նպաստում են սովորողների ստեղծագործական ունակությունների, հետազոտական կարողությունների ձևավորմանը, ինչպես նաև այնպիսի հոգրբանական որակների դրսևորմանը, ինչպիսիք են համառությունը, հետևողականությունը, նպատակասլացությունը:

## **6.ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ**

Հանրակրթական դպրոցում սովորողների արժեքային համակարգի դաստիարակության ընդհանուր համակարգում նշանակալից դեր ունի կենսաբանություն առարկայի դասավանդումը: Նրա նշանակությունը անհատի զարգացման ու ձևավորման մեջ բխում է գեղագիտական հարաբերությունների բազմակողմանիությունից՝ կապված մարդու, բնության, հասարակության, ինքն իր հետ ունեցած փոխհարաբերություններից, ինչն ընդգրկում է անհատի գիտակցության, արժեքային համակարգի ձևավորման և գործունեության ողջ բնագավառը: Կենսաբանության ուսուցումը երեխայի առջև բացում է դեպի բնական գիտությունները տանադ ճիշտ ճանապարհը՝ նրա համար բացահայտելով այն խնդիրներն ու նպատակները, որոնք նա պետք է դնի իր առջև կենսաբանական հետազոտ բարձրունքներին հասնելու համար: Այդ բարձրունքներին հասնում են միայն եզակիները: Այդուհանդերձ կենսաբանության տարրական գիտելիքները նրանց անպայման օգնում են հասկանալու և գնահատելու բնության մեջ տեղի ունեցող օրինաչափությունները, կատարել եղրահանգումներ և վերլուծություններ: Հանրակրթական դպրոցում կենսաբանության կազմակերպման դասընթացում արժեհամակարգի ձևավորման առաջնային դերը, անշուշտ, պատկանում է Ես և շրջակա աշխարհի ուսուցմանը: Սովորողների բուն կենսաբանական ունակությունների ձևավորումը սերտորեն կապված է նրա կենսաբանական կրթության, նրա տրամաբանական վերլուծության, համոզմունքների, քննական մտածողության հետ: Սովորողների բնագիտական գործունեության ակտիվացումը ժամանակակից և հրատապ խնդիր է, որը պետք է լուծել զուտ գիտականորեն հիմնավորված մեթոդներով ու եղանակներով: Բնության տարբեր վիճակները, երևույթները, բարդ և բազմաստիճան փոխհարաբերությունները ուսումնասիրելիս սովորողի առարկայական աշխարհը դիտարկելու և ուսումնասիրելու միջոցով մեծ հետաքրքրություն է հանդես բերում բնագիտական առարկաների նկատմամբ: Նա տեսնում է երևույթները տարբեր դիտանկյուններից և անում վերլուծություն: Գեղեցիկ ձեռագիր ունենալը, գեղեցիկ հագնվելը, գեղեցիկ հարաբերվելը և ստեղծագործելը համարվում են անհատի դաստիարակության հիմնական պայմանները, այս ամենը



ստանում են արժեքային համակարգի դաստիարակության պարագայում:

Երեխաների կրթության մասին խոսելիս՝ մենք հաճախ օգտագործում ենք «արժեքային» համակարգ հասկացությունը: Բոլորս կարևորում ենք արժեքների ձևավորումը գալիք սենդի մոտ և միգուցե այդ բառին ինչ-որ իմաստ ենք հաղորդում:

Արժեքների մեծ մասը սնվում է էթիկական նորմերից, ձևավորվում է դրանց շնորհիվ: Էթիկական նոմերը անհրաժեշտ են մարդկանց համակեցությունը ապահովելու համար:

Եթե էթիկական նորմերը ծառի արմատներն են, իսկ արժեքները՝ բունը, ապա բարոյականությունը դրա սաղարթն է: Բարոյական է այն ամենը, ինչը նպաստում է արժեքների պահպանմանը և չի հակասում դրանց:

Դպրոցը պետք է լինի օրինակելի տարածք, ուր հաստատուն են էթիկական նորմերը, ուր աշակերդները սովորում են դրանց համապատասխան: Հաճախ դպրոցը ստիպված է պայքարել հանրության մեջ տարածված արատների դեմ և այդ պայքարում պարտավոր է հաղթել: [4,6]

Ուսուցիչը պետք է գիտակցի.

Կենսաբանության դերն անհատի աշխարհայացքի ձևավորման գործում:

Կենսաբանական գիտելիքների կարևորությունը, դրանց կիրառության արդյունավետությունն առօրյա կյանքում և աշխատանքում:

Մարդկային գործունեության ազդեցությունը բնության վրա, կարևորի շրջակա միջավայրի պահպանության անհրաժեշտությունը և մասնակցի դրան նպատակաուղղված միջոցառումների իրականացմանը:

Ունենա դրական վերաբերմունք կենդանի բնության, սեփական առողջության և այլ մարդկանց առողջության նկատմամբ:

Կենսաբանական հետազոտությունների ժամանակ բարոյահոգեբանական նորմերի պահպանման անհրաժեշտություն:

Կրթության գործընթացում կենսաբանության ուսուցումը ունի ռազմավարական նշանակություն: Հանրակրթական դպրեցում կենսաբանության դասավանդումը նպատակաուղղված է սովորողի կողմից բնության մեջ տեղի ունեցող տարբեր երևույթների, դրանց դրսևորման պատճառների և օրինաչափությունների բացահայտմանը, աշխարհայացքի ձևավորմանը:

Կենսաբանության դասավանդման ընթացքում սովորողների մաթեմատիկական տրամաբանության կիրառումը արտահայտուվում է խնդիրների լուծման ընթացքում, որը սովորողների մեջ ձևավորում է ստեղծագործելու հմտություն, նպաստում է դրանց զարգացմանը:

Կենսաբանության իմացությունը խթանում է երեխաների երևակայությունը, զարգացնում է տրամաբանությունը, հարստացնում հոգեկան աշխարհը: Բնագիտական առարկաների ինտեգրված ուսուցումը հնարավորություն է տալիս բնական երևույթների դիտարկման ու ավելի պարզ մտածելակերպից տեղափոխվել ավելի բարդ՝ վերլուծական մտածողության դաշտ, նաև ուսուցման գործընթացում վեր հանել միջառարկայական կապերը և դրանց փոխադարձ ազդեցությունները:[3,8]

## 7.ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Գործնական աշխատանքների ներառումը կենսաբանության դասերին ունի որոշ առանձնահատկություններ և առավելություններ, դրանցից են.

Գործնական աշխատանքներ կազմելիս պետք է հաշվի առնել դասարանի սովորողների գիտելիքների մակարդակը և յուրաքանչյուր սովորողի անհատական առանձնահատկությունները, ուսումնառության ոճերը, տարիքային առանձնահատկությունները և ճգնաժամերը:

Գործնական աշխատանքների կիրառումը կենսաբանության դասընթացի ժամանակ կյանքին կապող լավագույն միջոց է :

Գործնական աշխատանքներ իրականացնելիս գործողությունները վերացական իմացական ձևերի մակարդակից փոխադրվում են պատկերավոր ընկալումների մակարդակ, միաժամանակ ստանալով հստակ ձևակերպումներ:

Այն սովորողները, որոնք ունեն ակտիվ վարքագիծ, առարկայի նկատմամբ չունեն բավարար հետաքրքրություններ, գործնական աշխատանքները հնարավորություն են տալիս առարկան տեսնել այլ կողմից և հետաքրքրությամբ, ակտիվ մասնակցություն ցուցաբերել նաև ուսումնական գործընթացում:

Գործնական աշխատանքների կազմակերպումը և արդյունավետությունը որոշակիորեն կախված են նաև ուսուցչի պատրաստվածության մակարդակից:

Առաջարկվում է.

Չաճախ իրականացնել գործնական աշխատանքներ, որոնք նպաստում են սովորողների միջանձնային փոխհարաբերությունների, ներանձնային աշխարհի ձևավորմանը, բնության մեջ տեղի ունեցող երևույթների միջև կապերի բացահայտմանն ու ընկալմանը:

Գործնական աշխատանքները մեծացնում են հետաքրքրությունը թեմայի և առարկայի նկատմամբ, քանի որ նրանք մի գործունեության ձևից անցնում են մեկ այլ գործունեության ձևի:

Գործնական աշխատանքները բարենպաստ պայմաններ կարող են ստեղծել արտադասարանական պարապմունքները, օրինակ՝ դպրոցի այգում կոմպոստ պատրաստել, դպրոցամերձ հողամասի մշակում, այցելություն բուսաբանական

այգի, ուստի նպատակահարմար կլինի նմանօրինակ դասեր էլ ավելի շատ անցկացնել:

Ցանկալի է, որ դասերի ընթացքում սովորողի համար դրվեն այնպիսի խնդիրներ, որոնք կստիպեն վերջինիս մտածել, լուծումներ գտնել ինքնուրույն: Այսպես կարելի է բարձրացնել սովորողի աշխատունակությունն ու հիմք նախապատրաստել մետաճանաչողության զարգացման համար:

Սովորողին ինքնուրույնություն տալով՝ մենք ապահովագրում ենք նրա բարեկեցիկ ապագան, ուստի աշակերտակենտրոն աշխատելաճը պետք է գերակայի:

**Ես լսում եմ ու մոռանում, ես տեսնում եմ ու հիշում,**

**Ես անում եմ ու հասկանում:**

**Կոնֆուցիոս**

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿԸ

1. Արեգնազ Սահակյան, «Սովորողների ինքնուրույն-գործնական աշխատանքներ», Վանաձոր, «ՍԻՄ տպագրատուն», 2010թ
2. <<ԲՆԱԳԵՏ >> 1, 2012, գիտահանրամատչելի և գիտամեթոդական հանդես 3.Հանրակրթական հիմնական և ավագ դպրոցի չափորոշիչ և ծրագիր 2004
- 4.Հանրակրթական ավագ դպրոցի չափորոշիչներ և ծրագիր ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 2009